ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/115

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման համար՝ թիվ 273.110.1156506),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.03.2022թ. թիվ 26/26-1/5199-2022 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի 21.03.2022թ. թիվ 222 գրության հիման վրա, 28.03.2022թ. թիվ 26/26-1/5199-2022 գրությամբ նախաձեռնել է «Ջիարջի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/115 ընթացակարգի շրջանակներում 01.04.2022թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և հայտնել է, որ Պատվիրատուն 31.01.2022թ. կնքված պայմանագիրը լուծել է պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման վերջնաժամկետը լրացած չլինելու պայմաններում:

3. <u>«Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.03.2022թ. թիվ 222 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում եմ ՀՀ Կոտայքի մարզի «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով պայմանագիրը, պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին ծանուցումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/115 ընթացակարգի շրջանակներում 01.04.2022թ. ժամը 09:33-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/115 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/115 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 31.01.2022թ. կնքվել է թիվ «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2» ծածկագրով «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 31.12.2022թ.:

3. Պատվիրատուն «Ջիարջի» ՍՊԸ-ին ուղղված 16.03.2022թ. թիվ 199 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով սույն թվականի փետրվարի 22-ին ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով պայմանագրի կատարման վերաբերյալ Ձեզ ուղարկված ծանուցումը և դեղորայքի առ այսօր մատակարարված չլինելու փաստը «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ՝ ղեկավարվելով ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետով, միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը /համաձայն կից հավելվածի/, քանի որ Ձեր Ընկերության կողմից էականորեն խախտվել է պայմանագիրը՝ բազմիցս խախտելով ապրանքի մատակարարման ժամկետները 30 օրից ավելի: (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 18.03.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.03.2022թ. թիվ 26/26-1/5199-2022 գրությունը, «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի 21.03.2022թ. թիվ 222 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝

1.Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2.***Պարտավորությունները ծագում են պայմանագրից***, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 31.01.2022թ. կնքվել է թիվ «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2» ծածկագրով «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը

պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 31.12.2022թ.:

Պատվիրատուն «Ջիարջի» ՍՊԸ-ին ուղղված 16.03.2022թ. թիվ 199 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով սույն թվականի փետրվարի 22-ին ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով պայմանագրի կատարման վերաբերյալ Ձեզ ուղարկված ծանուցումը և դեղորայքի առ այսօր մատակարարված չլինելու փաստը «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի ԲԿ» ՓԲԸ՝ ղեկավարվելով ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետով, միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը /համաձայն կից հավելվածի/, քանի որ Ձեր Ընկերության կողմից էականորեն խախտվել է պայմանագիրը՝ բազմիցս խախտելով ապրանքի մատակարարման ժամկետները 30 օրից ավելի: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 18.03.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.</u>***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</u>***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:</u>

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, հետևաբար՝ պայմանագրով էլ սահմանվում են պարտավորությունները կատարելու կարգն ու ժամկետները և դրանց մասով խախտումներն էական համարվելու պայմաններն ու դեպքերը, մինչդեռ՝ Պատվիրատուն 18.03.2022թ. լուծել է 31.01.2022թ. կնքված թիվ «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/2» պայմանագիրը, Պայմանագրի կատարման վերջնաժամկետը այն է՝ 31.12.2022թ. և Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված ժամկետը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի, լրացած չլինելու, այսինքն՝ Պայմանագրի 2.1.7 կետով նախատեսված էական խախտման փաստը վրա հասած չլինելու պայմաններում:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 28.03.2022թ. թիվ 26/26-1/5199-2022 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**